ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 27-ին, կիրակի.—*Մայր Տաճա-*
ում պատարագեց հոգ. Տ. Արսեն վրդ. Բեր-
ներյանը։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-
ապետի հանդիսագրությամբ կատարվեց
ոհաավարական մաղթանք՝ Հայաստանում
ովետական կարգերի հաստատման 46-րդ
տարեդարձի առթիվ։

***

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի.—*Հոգ. Տ.*
արեկ վրդ. Շաքարյանը հովվական այցե-
ությամբ մեկնեց Բաքու և Կիրովաբադ։ Հայր
ուրբը Մայր Աթոռ վերադարձավ դեկտեմ-
բերի 14-ին։

***

Դեկտեմբերի 3-ին, շաբաթ.—*«Տօն սրբոց*
առաքելոցն և առաջին Լուսաւորչացն մերոց
Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճա-
ում օրվա տոնի առիթով պատարագեց և
քարոզեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայդարյա-
ը, «Առաքեալք Աստուծոյ, սիւնք հաւատոյ
աթողիկէ եկեղեցւոյ» բնաբանով։

Ժամը 12-ին Հոգևոր Ճեմարանում տեղի
ունեցավ հանդիսավոր նիստ, Վեհափառ
Հայրապետի նախագահությամբ՝ նվիրված
Հայաստանում սովետական կարգերի հաս-
տատման 46-րդ տարեդարձին։

Հանդեսության բացումը կատարեց Հոգևոր
Ճեմարանի տեսուչ հոգ. Տ. Ներսես ծ. վրդ.
Պոզապալյանը՝ ներածական խոսքով։

Օրվա տոնի ազգային, հայրենասիրական
նշանակության մասին զեկուցեց ճեմարանի
հայ ժողովրդի պատմության դասախոս Գր.
Գյուլյանը։ Հանդեսությանը իրենց շնորհալի
մասնակցությունը բերեցին ճեմարանի ու-
սանողները՝ խմբերգերով, մեներգերով և
արտասանություններով։

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ։

***

Դեկտեմբերի 4-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց գեր. Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 11-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հովհաննես քահ. Մարուքյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 18-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հակոբ քահ. Հակոբյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 20-ին, երեքշաբթի.— *Այսօր ապաքինված և կազդուրված Դամասկոս մեկնեց թեմի առաջնորդ գեր. Տ. Շավարշ եպս. Գույումճյանը, որը ավելի քան մեկ ամիս բուժվում էր հայրենիքում։*

***

Դեկտեմբերի 25-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Մկրտիչ ավագ քահ. Մկրտչյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի.— «Տօն սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»։

Մայր Տաճարում Ս. Ստեփանոսի խորանի վրա պատարագեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզեց «մկրտեցար արեամբդ քով սրբով, առաջին վկա Քրիստոսի ուրբ Ստեփաննոս նախասարկավագ» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի սարկավագները, Լուսարարապետ գեր. Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի առաջնորդությամբ, ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ նրա օրհնությունն ստանալու իրենց տոնի առիթով։

Ն. Ս. Օծությունը, շնորհավորելով Մայր Աթոռի երիտասարդ միաբանների տոնը, թելադրեց նրանց լեցվել Ստեփանոսի հավատքով ու նախանձախնդրությամբ և նվիրվել Հայ Եկեղեցու սպասավորության սուրբ գործին՝ անձանձրաբեր և գիտակից ընծայաբերումով։

Կեսօրից հետո, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հարկի տակ տեղի ունեցավ երաժշտական համերգ, որին իրենց շնորհալի մասնակցությունն էին բերել քույր և եղբայր արվեստասեր Սվաճյանները, Հրաչյան՝ ջութակահար, Սիրվարդը՝ դաշնամուրի ընկերակցությամբ։

Ծրագրում կային՝ Բախ (պարտիա № 1), Բրամս (սոնատ № 1), Բեթհովեն (ջութակի կոնցերտի առաջին մաս), Սկոտ (Լոտասի երկրում) և Կոմիտաս վարդապետ («Միրանի ծառ», «Կաքավի երգ», «Կռունկ»)։

Համերգի վերջում Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը շնորհակալություն հայտնեց հանուն բոլոր ներկաների՝ այս գեղեցիկ երաժշտական ծրագրի կատարման առիթով՝ նորանոր հաջողություններ մաղթելով քույր և եղբայր Սվաճյաններին, նրանց երաժշտական կատարելագործման խոստումնալից ճանապարհի վրա։

1967

Հունվարի 3-ին, երեքշաբթի.—Հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը հովվական այցելությամբ մեկնեց Բաքու, Ռոստով և Զալդր։ Հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 22-ին։

***

Հունվարի 5-ին, հինգշաբթի.—«Ծրագալույց Մանկան և Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Աթոռում ավանդական հանդիսությամբ նշվեց Ծրագալույցի տոնը։

Մայր Տաճարում, երեկոյան համերգության ժամանակ, Վեհափառ Հայրապետը կարդաց օրվա աստվածաշնչական ընթերցումները։ Հոգևոր Ճեմարանի սաները ընթերցեցին «Դանիէլ»-ի գիրքը։ Ծրագալույցի պատարագը մատուցեց հոգ. Տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Խորհուրդ մեծ» շարականի հնչյունների ներքո առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց միաբանության անդամներին։

***

Հունվարի 7-ին, շաբաթ.—Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Խորեն վրդ. Էլչուճյանը։ Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանդիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։

***

Հունվարի 8-ին, կիրակի.—Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» բնաբանով։

***

Հունվարի 9-ին, երկուշաբթի.—Նոր տարվա և Ս. Մանկյան տոների արձակուրդներից հետո Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները։

***

Հունվարի 13-ին, ուրբաթ.—«Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Արսեն վրդ. Բերբերյանը։

***

Հունվարի 14-ին, շաբաթ.—«Տօն Մանկան սրբոյն Յովհաննու Կարապետին»։

Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Հովհաննես քահ. Մարուքյանը՝ Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա։

***

Հունվարի 15-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց հոգ. Տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և քարոզեց «Երկնաքաղաքացին Յովհաննես մեծն ի ծնունդս կանանց» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հունվարի 16-ին, երկուշաբթի.—*Հոգ. Տ. Գրսեն վրդ. Բերբերյանը, հովվական այցելությամբ, մեկնեց Օրջոնիկիձե։ Հայր սուրբը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 21-ին։*

Նույն օրը, Ծննդյան տոնի առիթով, Արմավիր մեկնեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Հակոբյանը և վերադարձավ Մայր Աթոռ հունվարի 22-ին։

***

Հունվարի 22-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց արժ. Տ. Մկրտիչ ավագ քահ. Մկրտչյանը։*

***

Հունվարի 23-ին, երկուշաբթի.—*Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1966—1967 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք կտևեն մինչև փետրվարի 1-ը։*

***

Հունվարի 29-ին, կիրակի.—*Մայր Տաճարում պատարագեց դեր. Տ. Վահան եպս. Տերյանը և քարոզեց «Ո՛չ երբեք այնպէս խօսեցաւ մարդ որպէս այրն այն» բնաբանով (Հովհ. Է. 46)։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։